Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023. «Գյումրիում անապահով բնակչության համար գյուղատնտեսական ուսումնական կենտրոնի կառուցման» ծրագիր»

Երևան՝ 29 Մայիսի, 2025թ.

2025 թվականի մայիսի 29-ին նորաստեղծ գյուղատնտեսական ուսումնական կենտրոնում տեղի ունեցավ «Գյումրիում անապահով բնակչության համար գյուղատնտեսական ուսումնական կենտրոնի կառուցման» դրամաշնորհային ծրագրի ավարտական արարողությունը (մինչև 65,424 ԱՄՆ դոլար): Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն ԱՈԿԻ Յուտական, «Կարիտաս Արեգակ» հիմնադրամի ներկայացուցիչ տիկին Տիգրանուհի Հակոպյանը և Գյումրու համայնքապետի առաջին տեղակալ Պարոն Ավետիս Առաքելյանը, ինչպես նաև «Կարիտաս Արեգակ» հիմնադրամի և «Հայկական Կարիտաս»-ի աշխատակիցներ:

Այս ծրագրի արդյունքում կառուցվել է գյուղատնտեսական ուսումնական կենտրոն Գյումրի համայնքում, որը հնարավորություն կտա սոցիալապես խոցելի խմբի 50 բնակիչների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց և Լեռնային Ղարաբաղից տեղահանված փախստականների ստանալ գյուղատնտեսական կրթություն: Համայքնում տնային տնտեսության միջին ամսական եկամուտը կազմում է մոտավորապես 335 ԱՄՆ դոլար, որը ազգային միջին ամսական եկամտի ՝ 620 ԱՄՆ դոլարի մոտ կեսն է, մինչդեռ գործազրկության մակարդակը հասնում է 24%-ի, գրեթե կրկնակի ավել, քան Հայաստանի ընդհանուր գործազրկության 13% միջին ցուցանիշը: Հատկապես մտահոգիչ է հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում գործազրկության մակարդակը, որը կազմում է շուրջ 90%: Հետևաբար, այս ծրագիրը նպատակ ունի ապահովել մասնագիտական ուսուցում խոչընդոտներից զերծ միջավայրում՝ աջակցելով սոցիալապես խոցելի անձանց գյուղատնտեսական հմտություններ ձեռք բերելու և տնտեսական անկախության հասնելու հարցում:

«Կարիտաս Արեգակ» հիմնադրամի տնօրեն տիկին Հակոբյանը երախտիքի խոսքեր հայտնեց՝ նշելով. «Այս տարածաշրջանում հաշմանդամություն ունեցող անձինք և փախստականները սահմանափակ հնարավորություններ ունեին գյուղատնտեսություն սովորելու համար, սակայն ճապոնական աջակցությամբ կառուցված գյուղատնտեսական ուսումնական կենտրոնի շնորհիվ նրանք այժմ կարող են գործնական մասնագիտական ուսուցում ստանալ անխոչընդոտ միջավայրում: Այս կենտրոնը ոչ միայն գյուղատնտեսական ուսուցում է տրամադրում, այլև նախատեսում է մանրակրկիտ աջակցել պրակտիկանտների զբաղվածության հնարավորությունների ընդլայնմանը՝ տրամադրելով կրթություն այն ֆերմերների համար, ովքեր ուսումնական ծրագրից հետո կծառայեն որպես գործատուներ, և անցկացնելով սեմինարներ՝ ֆերմերներին պրակտիկանտների հետ կապելու համար»:

Դեսպան Առկին և Տիկին Հակոբյանը կենտրոնի բացման ժապավենը կտրելիս

Տիկին Հակոբյանը երախտիքի խոսք հայտնեց

Նկար ծրագրի շահառուների հետ

Նորաստեղծ գյուղատնտեսական ուսումնական կենտրոնի ներսում